

MMRV (ԿԱՐՄՐՈՒԿ, ԽՈՉՈՒԿ, ԿԱՐՄՐԱԽՏ ԵՎ ՋՐԾԱՂԻԿ)

ՊԱՏՎԱՍՏ

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԴՈՒՔ ԻՄԱՆԱՔ

Պատվաստի մասին Շատ Տեղեկություններ Կան Իսպաներենով Եվ Այլ Լեզուներով: Տես www.immunize.org/mis:

1 Կարմրուկ, Խոզուկ, Կարմրախտ Եվ Ջրծաղիկ

Կարմրուկը, խոզուկը, կարմրախտը եւ ջրծաղիկը (chickenpox) կարող են լուրջ հիվանդություններ լինել:

Կարմրուկ

- Պատճառում է ցան, հազ, հոսող քիթ, աչքի գրգռում, ջերմություն:
- Կարող է առաջացնել ականջի բորբոքում, թոքատապ, ցնցումներ, ուղեղի վնասվածք եւ մահ:

Խոզուկ

- Պատճառում է ջերմություն, գլխացավ, գեղձերի այտուց:
- Կարող է առաջացնել խլություն, մենինգիտ (ուղեղային եւ ողնաշարային թաղանթի վարակում), ենթատառամոքսային գեղձի վարակում, ամորձիների եւ ձկարանի ցավոտ այտուցում եւ հազվադեպ՝ մահ:

Կարմրախտ (Չերմանական հարսանք)

- Պատճառում է ցան եւ թեթեւ ջերմություն, եւ կարող է պատճառել հողացավ (մեծ մասամբ կանանց մոտ):
- Եթե կինը հղիության շրջանում վարակվի կարմրախտով, կարող է ունենալ վիժում կամ նրա երեխան կարող է ծնվել լուրջ արատներով:

Ջրծաղիկ (Chickenpox)

- Պատճառում է ցան, ջոր, ջերմություն, հոգևածություն:
- Կարող է առաջնորդել մաշկի ծանր վարակման, սպիների, թոքատապի, ուղեղի վնասվածքի կամ մահվան:
- Տարիներ հետո նորից կարող է հայտնվել ցավոտ ցանի տեսքով, որ կոչվում է գոտեղոցին (shingles):

Այս հիվանդությունները տարածվում են անհատից անհատ օդի միջոցով: Ջրծաղիկը նաեւ կարող է տարածվել ջրծաղիկի բշտիկների հեղուկի հետ շփման պատճառով:

Մինչ պատվաստները, այս հիվանդությունները շատ տարածված էին Միացյալ Նահանգներում:

2 MMRV Պատվաստ

MMRV պատվաստը կարող է տրվել 1-12 տարեկան երեխաներին՝ այս չորս հիվանդություններից նրանց պաշտպանելու համար:

- Հանձնարարվում է MMRV պատվաստի երկու չափաբաժին.
- Առաջին չափաբաժինը՝ **12-15 ամսական հասակում**
- Երկրորդ չափաբաժինը՝ **4-6 տարեկան հասակում**

Սրանք *հանձնարարված* տարիքներն են: Սակայն երեխաները կարող են երկրորդ չափաբաժինը ստանալ

մինչեւ 12 տարեկան, պայմանով, որ դա լինի առաջին չափաբաժնից 3 ամիս հետո:

Երեխաները կարող են այս պատվաստներն ստանալ նաեւ որպես 2 տարբեր սրսկումներ՝ MMR-ի (կարմրուկ, խոզուկ եւ կարմրախտ) եւ ջրծաղիկի պատվաստներ:

1 սրսկում (MMRV) կամ 2 սրսկումներ (MMR եւ ջրծաղիկ):

- Երկու տարբերակներն էլ լույս պաշտպանություն են տալիս:
- MMRV-ի դեպքում՝ մեկ սրսկում պակաս:
- Երեխաները, որոնք ստացել են առաջին չափաբաժինը որպես MMRV, ավելի շատ ջերմություն եւ ջերմության հետ կապված ցնցումներ են ունեցել (1,250-ից մոտավորապես 1 երեխա), քան այն երեխաները, որոնք լույս օրը ստացել են առաջին չափաբաժինը որպես MMR-ի առանձին սրսկում եւ ջրծաղիկի պատվաստ (2,500-ից մոտավորապես 1 երեխա):

Ձեր բժշկական խնամք ապահովողը կարող է ավելի շատ տեղեկություն տալ ձեզ, ներառյալ MMR-ի եւ Ջրծաղիկի պատվաստների մասին Պատվաստների Տեղեկության Արձանագրությունը:

13 տարեկան կամ ավելի մեծ որեւէ անհատ, ով կարիք ունի այս հիվանդություններից պաշտպանվելու, պետք է ստանա MMR-ի եւ Ջրծաղիկի պատվաստներ՝ որպես առանձին սրսկումներ:

MMRV պատվաստը կարող է տրվել տարբեր պատվաստների հետ միաժամանակ:

3 Որոշ երեխաներ պետք չէ ստանան MMRV պատվաստ կամ պետք է սպասեն

Երեխաները պետք չէ ստանան MMRV պատվաստ, եթե նրանք.

- Երբեւէ ունեցել են կյանքը վտանգող ալերգիկ հակազդեցություն MMRV-ի պատվաստի նախորդ չափաբաժնից, կամ երկուսից էլ՝ MMR-ի կամ Ջրծաղիկի պատվաստից:
- Երբեւէ ունեցել են կյանքը վտանգող ալերգիկ հակազդեցություն պատվաստի որեւէ այլ բաղադրամասի նկատմամբ, ներառյալ ժելատինը կամ նեոմիցին անտիբիոտիկը: Եթե ձեր երեխան ունի որեւէ ծանր ալերգիա, հայտնեք բժշկին:
- Ունեն HIV/AIDS կամ այլ հիվանդություն, որն ազդում է իմունային համակարգի վրա:
- Բուժվում են այնպիսի դեղերով, որոնք ազդում են իմունային համակարգի վրա, ներառյալ 2 շաբաթով կամ ավելի երկար ժամանակով ընդունվող բարձր չափաբաժնով ստերոիդները:
- Ունեն որեւէ տեսակի քաղցկեղ:
- Բուժվում են քաղցկեղից ճառագայթման կամ դեղահատերի միջոցով:

Հարցրեք ձեր բժշկի կարծիքն այն դեպքում, եթե ձեր երեխան՝

- Իր հիվանդության պատմության ընթացքում ունեցել է ցնցումներ կամ ունի ծնողներ, եղբայր կամ քույր, որոնք ցնցումների պատմություն ունեն:
- Ունի ծնողներ, եղբայր կամ քույր, որոնք ունեցել են իմունային համակարգի հետ կապված խնդիրներ:
- Երբեք ունեցել է արյան գնդիկների նվազում կամ արյան այլ խանգարումներ:
- Վերջերս ունեցել է փոխներարկում կամ ստացել է արյան այլ արտադրություններ:
- Կարող է հղի լինել:

Այն երեխաները, ովքեր չափավոր կամ ծանր հիվանդ են սրկված համար նախատեսված օրը, սովորաբար պետք է սպասեն մինչև առողջանալը՝ MMRV-ի պատվաստ ստանալու համար: Թեթևորեն հիվանդ երեխան սովորաբար կարող է պատվաստ ստանալ:

Հավելյալ տեղեկությունների համար հարցրեք ձեր բժշկին:

4 Որո՞նք են MMRV պատվաստի վտանգները:

Պատվաստը, ինչպես որևէ այլ դեղամիջոց, ունակ է պատճառելու լուրջ բարդություններ, ինչպես՝ ծանր այերգիկ հակազդեցություններ: MMRV պատվաստից լուրջ վնասի կամ մահ պատճառելու վտանգը չափազանց փոքր է:

MMRV պատվաստ ընդունելը շատ ավելի ապահով է, քան կարմրուկով, խոզուկով, կարմրախտով կամ ջրծաղիկով հիվանդանալը:

MMRV պատվաստ ստացող երեխաների մեծ մասը պատվաստի հետ կապված որևէ բարդություն չի ունենում:

Թեթև բարդություններ

- Ջերմություն (5-ից մոտավորապես 1 Երեխա):
- Թեթև ցան (20-ից մոտավորապես 1 Երեխա):
- Այտերի կամ պարանոցի գեղձերի այտուց (հազվադեպ):

Եթե այս բարդություններն առաջանան, ապա սովորաբար դա տեղի է կունենա առաջին չափաբաժինը ստանալուց 5-12 օր հետո: Երկրորդ չափաբաժինը ստանալուց հետո դրանք ավելի հազվադեպ են պատահում:

Միջին բարդություններ

- Ջերմության հետեւանքով ցնցումներ (մոտավորապես 1,250 երեխայից 1-ը, ով ստացել է MMRV պատվաստ), սովորաբար առաջին չափաբաժնից 5-12 օր հետո: *Դրանք ավելի հազվադեպ են պատահում, երբ MMR-ի եւ ջրծաղիկի պատվաստները նույն այցելության ժամանակ են տրվում իրրեւ առանձին սրկումներ (մոտավորապես 2,500 երեխայից 1-ը, ով ստացել է այս երկու պատվաստները), եւ հազվադեպ՝ MMRV-ի երկրորդ չափաբաժինը ստանալուց հետո:*
- Արյան գնդիկների ժամանակավոր նվազում, որը կարող է պատճառել արյունահոսություն (մոտավորապես 40,000 երեխայից 1-ը):

Սուր բարդություններ (ծանր հազվադեպ)

MMRV-ի պատվաստից հետո գրանցվել են մի քանի սուր բարդություններ եւ կարող են նաեւ պատահել MMRV-ից հետո: Սրանք ներառում են այերգիկ սուր հակազդեցություններ (միլիոնի մեջ 4 հոգուց պակաս), եւ բարդություններ, ինչպես՝

- Խլութուն:
- Երկարատեւ ցնցումներ, մահացուն (coma), գիտակցության նվազում:
- Ուղեղի մշտական վնասվածք:

Այս բարդությունները այնքան հազվադեպ են պատահում, որ մենք չենք կարող վստահ լինել, թե դրանք պատվաստի հետեւանքով են առաջանում կամ ոչ:

5 Ի՞նչ անել ծանր ռեակցիայի դեպքում:

Ես ինչի՞ վրա պետք է ուշադրություն դարձնեմ:

Որեւէ անսովոր վիճակի, ինչպես բարձր տաքություն կամ վարքագծի փոփոխություն: Ծանր այերգիկ ռեակցիայի նշաններ կարող են լինել ծանր շնչառությունը, խոպոտությունը կամ խոխոցը, ցաները, գունատությունը, թուլությունը, սրտի արագ բաբախումը կամ գլխապտույտը:

Ես ի՞նչ պետք է անեմ:

- **Չանգեք** բժշկին, կամ տվյալ անձին անմիջապես բժշկի տարեք:
- **Անեք** բժշկին ինչ է պատահել, դեպքի օրը եւ ժամանակը եւ պատվաստումը երբ է կատարվել:
- **Խնդրեք** ձեր խնամատարին, որպեսզի ռեակցիայի մասին տեղեկագրի՝ լրացնելով Պատվաստի Հակազդեցության Դեպքերի Տեղեկագրման Համակարգի (Vaccine Adverse Event Reporting System, VAERS) ձև: Կամ դուք կարող եք տեղեկագիրը գրանցել VAERS կայքում www.vaers.hhs.gov հասցեով կամ գանգել **1-800-822-7967** համարով:

VAERS-ը բժշկական խորհուրդներ չի մատակարարում:

6 Պատվաստի վնասների Հատուցման Պետական Ծրագիր

Պատվաստի վնասների Հատուցման Պետական Ծրագիրը (National Vaccine Injury Compensation Program, VICP) ստեղծվել է 1986-ին:

Այն մարդիկ, որոնք կարծում են, որ իրենք վնասվել են պատվաստից, կարող են բողոքագիր ներկայացնել VICP, գանգահարելով **1-800-338-2382** հեռախոսահամարով կամ այցելելով նրանց կայքը www.hrsa.gov/vaccinecompensation հասցեով:

7 Ինչպե՞ս կարող եմ ավելի տեղեկություն ունենալ:

- Հարցրեք ձեր խնամատարին: Նրանք կարող են ձեզ տալ պատվաստի փաթեթի ներդիրը կամ առաջարկել տեղեկության այլ աղբյուրներ: **1-888-767-4687**
- Չանգեք ձեր տեղական կամ նահանգային բաժանմունք:
- Կապվեք Հիվանդությունների Կառավարման եւ Կանխարգելման Կենտրոնների հետ (CDC).
 - Չանգեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** կամ
 - Այցելեք CDC-ի կայքը՝ www.cdc.gov/vaccines



Vaccine Information Statement (Interim)
MMRV Vaccine IMM-1013AN – Armenian (5/21/10) 42 U.S.C. §300a-26
Translated by Translated Translations, Davis, CA www.translated.com

AUTH: P.H.S., Act 42, Sect. 2126.

DCH-1494A

Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավահավասար վերաբերող հարցեր տեղեկություն, պատվաստումների գնահատականներ եւ հետազոտ պատվաստումների առաջարկված գրահիշ, տեղեկությունները կառավարվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն ցույցարկվեն: